

ԹԵՈՒ ՄԱԱՐՏԸՆ ՎԱՆ ԼԻՆՏ

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հաջորդ մի քանի էջով կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի թեմայի վրա, որ կարող է անսպասելի թվալ: Զբաղվելով Գրիգոր Մագիստրոսի թողած գրական ժառանգությանը, ինձ հետաքրքրեց նրա կարծիքը վաղ շրջանի պատմագրության մասին: Ի՞նչ է Գրիգոր Պահլավունին ասում գրա մասին, ո՞ւմ գործերի հետ է ծանոթ եղել, որո՞նք էին գրանց անդրադառնալու հանգամանքները:

Մի շարժառիթ ևս կար, որ գրդեց փորձել անցյալի աչքերով նայելու ավելի վաղ անցյալին: Դա այն փաստն է, որ անցյալը շարունակ կարծես թե փոխվում է: Մենք բոլորս էլ որոշ չափով միշտ մեր անցյալը կառուցում, ստեղծում ենք: Այն սերնդե սերունդ տարբեր տեսք ունի: Ի՞նչ ենք հիշում, կամ համարում ենք հիշատակի արժանի այն անցած ժամանակների իրողություններից: Ի՞նչպես են այդ հիշողությունները ձևավորված և կազմակերպված: Ի՞նչն է պատահական, երկրորդական, և ի՞նչն է էական, սահմանեցնող նշանակություն ունենում: Եվ սա ոչ միայն առանձին անձնավորության, այլ նաև հասարակության, ժողովրդի, ազգի համար: Վերջին այդ եզրերն իրենք էլ կարող են նման ընտրության արդյունք հանդիսանալ:

Մի օրինակ բերեմ, որը բոլորին քաջ հայտնի է: Եղիշեն իր Վարդանի կամ Հայոց պատերազմի պատմության մեջ ասում է, թե հայերը Քրիստոնեությունը պաշտպանում էին զրադաշտական Մասանյանների դեմ, որպես իրենց հայրենի օրենքը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հինգերորդ դարի կեսին Քրիստոնեությունը դեռ բավականաչափ նոր կրոն էր, և այն նախարարները, ովքեր Մասանյանների կողմն էին ընտրել, որոշ արգարությանը կարող էին հաստատել, որ հայրենի օրենքը հենց զրադաշտականությունն է, որպես իրենց Պարթև նախնիների կրոնը: Եղիշե վարդապետի տեսակետից այն փաստը, որ Վարդան Մամիկոնյանի ժամանակ քրիստոնեությունն արդեն մեկուկես դար հաստատված էր եղել, շատ ավելի կարևոր էր, քան այն որ զրադաշտականությունը Հայոց հին կրոնն էր եղել:

Թվում է, հետաքրքրական կլինի փորձել հասկանալ, թե ինչպես է մոտենում անցյալին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Մագիստրոսը շատ յուրահատուկ անձնավորություն է հայոց պատմության մեջ: Իր ժամանակի ամե-

նազիտուն, բազմակողմանի գիտելիքների տեր մի անձ է նա եղել¹: Ավելին, նա արժանի է հատուկ ուշադրության, քանի որ եկեղեցական չի եղել: Պակաս կարևոր չէ նրա կարծիքներին ծանոթանալը նաև այն պատճառով, որ նա ամենաազդեցիկ կաթողիկոսների տոհմի նախահայրն է: Սկսած իր որդուց, Վահրամից, այսինքն Գրիգոր Բ Վկայասերից (1065-1105), Պահլավունիները փաստորեն եղել են կաթողիկոս-թագավորներ, մինչև իշխան Լևոն II թագադրումը որպես Լևոն I (հայոց) թագավոր:

Գրիգոր Մազիստրոսն իհարկե չէր կարող իմանալ, որ Պահլավունիների տոհմն այդքան կարևոր դեր էր խաղալու ապագայում, չնայած չեն կարծում, որ դա նրան զարմացներ: Ինքը միշտ բարձր պաշտոններ էր զբաղվել, ոչ միայն Բազրատունյաց Հայաստանում, այլ նաև Բյուզանդական կայսրության մեջ: Իր ռազմական, քաղաքական և ընդհանրապես ղեկավարմանն առնչվող փորձի հետ միասին, նա ճանաչված էր նաև որպես աստվածաբան: Կարելի է ասել, որ այդ շափազանց ընդունակ անձնավորությունն իր մեջ զուգակցում էր և՛ աշխարհիկ մարդու, և՛ աստվածաբանի, որը կրոնավորների մտերիմ ընկերն էր: Նրա աշակերտների թվում կային եպիսկոպոսներ, և նույնիսկ ապագա մի կաթողիկոս:

Մազիստրոսի երկերում վաղ շրջանի պատմագրությունը ներկայացված է երկու երկերով՝ Ազաթանդեղոսի Պատմությամբ և Մովսես Խորենացու Հայոց պատմությամբ²: Գիտնականների տեսանկյունից է կախված, Խորենացուն վաղ շրջանի պատմագիր համարել, թե ոչ: Այսօր ես այդ հարցը չեմ շոշափում, քանի որ Մազիստրոսի աշխարհայացքի համար այն էական չէ: Նա Խորենացուն ընդունում է որպես հայոց անցյալին վերաբերող հարցերում մի հեղինակություն: Բացի նշված երկու պատմական երկից, Մազիստրոսը գիտում է առասպելների՝ որպես անցյալի ճանաչման կարևոր միջոցի: Այժմ անդրադառնանք Խորենացուն և առասպելներին, իսկ Ազաթանդեղոսին կանգնադառնանք մեկ այլ առիթով:

Մազիստրոսն իր թղթերում Մովսես Խորենացուն մի քանի անգամ է հիշատակում, ուստի հաստատ է, որ նրա Պատմությամբ ծանոթ է³: Ավելին, ինչպես կտեսնենք, նրա պատմության փիլիսոփայությունը շատ մոտ է Խորե-

¹ Գրիգոր Մազիստրոսի կյանքի և ստեղծագործության մասին, տ. **Langlois** 1869, **Կոստանեանց** 1909, **Leroy** 1935, **Խաչերեան** 1987, **Sanjian** 1993, **Մխիթարյան** 2001, **Terian** 2012, **Մուրադեան** 2012, **Մուրադյան** 2014, **van Lint** 2010, 2012, և 2014:

² **Կոստանեանց** 1910, 318-324, **Terian** 2012, 57-58 (տողեր 922-966), 84-87 (ճանոթագրություններ) and 113 (բնագիր): Արձագանքներ կան նաև Կորիմի Վարք Մաշտոցի-ից, բայց Մազիստրոսի հաղորդած տեղեկությունները կարող են կաղած լինեն Ագաթանգեղոսի և Խորենացու երկերից:

³ Մ21.44, էջ 272 և ծան. 2 (Կ2), Մ24.51, էջ 284 (Կ19); Մ27.27, էջ 296 և ծան. 2 (Կ18), Մ46.5, էջ 322 (Կ7)՝ Գետադարձի ախորի ժամանակ գրված մխիթարական նամակ է: Մ53.2, էջ 332 (Կ32).

նացու տեսակետներին: Օրինակները բերելու եմ Մուրադյանի նոր՝ Մառե-նագիրք Հայոց-ի տասնվեցերորդ հատորում լույս ընծայած հրատարակությու-նից⁴: Մուրադյանի հրատարակության կազմակերպչական սկզբունքները տար-բերվում են Կոստանյանցի կիրառածներին: Կոստանյանցի մոտ առաջին ինը նամակները ուղղված են Պետրոս Գետազարձ Կաթողիկոսին (1019-1058)⁵: Մուրադյանի քսանմեկերորդ նամակը (Կ2) այն նամակն է, որտեղ Մագիստրո-սը խնդրում է, որ Գետազարձն իրեն ուղարկի Անանիա Շիրակացու Քննիկոն-ի ձեռագիրը, որը՝ չկարդացված և չուսումնասիրված, գտնվում է կաթողիկոսա-րանի գրադարանում: Այստեղ երեք հանգամանք են կարևոր համարում: Նախ, Մագիստրոսը կրկնում է Խորենացու Պատմության սկզբում արտահայտված այն դժգոհությունը, որ հայերը չեն սիրում ուսումը, ոչ էլ արժանի փաստեր գրավոր ձևով պահպանելը, և ընդհանրապես գրքեր չեն սիրում: Երկրորդն այն է, որ նա միևնույն ժամանակ կրկնում է Անանիա Շիրակացու ասածը, որը գտնվում ենք նրա ինքնակենսագրական արձակում: Երրորդ տարրը, որն էական է Մագիստրոսի գիրքորոշման նշանակությունը ընկալելու համար, այն փաստն է, որ Գրիգորը մի նախարար է, աշխարհական, մեծ տոհմի ժառան-գորդ, և նույն ժամանակ սիրում է ուսումը, որն ավելի շուտ նախատեսված էր կրոնականների համար: Մագիստրոսի տոհմը ծագում էր Արշակունիներից, Գրիգոր Լուսավորչի տոհմից և Մամիկոնեաններից⁶: Հետևաբար Գրիգորն իր մեջ միավորում է միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցած երկու տարբեր ասպարեզներ՝ եկեղեցականը և աշխարհականը:

Մեջբերում եմ բավական երկար մի հատված՝

«43. Եւ արդ քանզի սակս մատենին Անանիայի եղեւ յիշատակ իմաստա-սիրելոյս մեզ, բէր ոչինչ խրթին եւ անյայտարար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսավորչիդ: 44. Ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գոր-ծանոթիւնք եւ հանդէսք, որ ոչ երբէք ի ստաղին⁷ վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղեւ ան-կանել, այլ եւ բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, եւ յայդմ մատենի մակագրութեան վերձանեմք: 45. Քանզի Արամեան սերի հպար-տութիւն եւ անամոք բնութիւն եւ խստապարանոց բարս ոչ ստորակայի յայ-սոսիկ կրթութիւնս յարատեական հաւանեալ, կամ եթէ ոչ փոյթ, որք պետակա-

⁴ **Կոստանեանց** 1910 գիրքը երկար ժամանակ մեր հիմնական աղբյուրն է եղել Մագիստրոսի նամակների համար: Մեր հղումները երբեմն ներառում են Կոստանեանցի հրատարակությունը:

⁵ Մուրադյանի հրատարակության հետևյալ թվեր են՝ Մ7, Մ21, Մ19, Մ20, Մ25, Մ70, Մ46, Մ58, Մ3:

⁶ **Teryan** 2012, 11 և ծան. 24: Իր ծագումն անշուշտ կարևոր էր Մագիստրոսի համար, սակայն արդի գիտնականները միշտ չեն ընդունում նրա ծննդաբանությունը:

⁷ Կ՝ ստագին:

նին հասին բախտի, մեծարու լինել եւ խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարդոնոսական սպարանին, որպէս մեծ Փտլոմէոսն այն եւ որք այլք այդպիսիք: 46. Եւ զի բազում աշխատութեամբ խոնջեալ եւ տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտրականն ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յարաբացուց եւ քաղղէացուց եւ յունաց, ոչ զանդաղեցայ քննութեամբ զփորձ առնուլ»⁸:

Գրիգոր Պահլաւունու քսանյոթերորդ նամակը (1042-1044 թթ-ի ժամանակաշրջանում), ուղղված է Սարգիս վարդապետին, գրված այն ժամանակ, երբ Գրիգորը Անիում հալածվում էր Գագիկ թագաւորի կողմից⁹: Գրիգորն իրեն համեմատում է Գրիգոր Լուսաւորչի հետ, երբ վերջինս հալածանքների էր ենթարկված Տրդատ թագաւորի կողմից: Գրիգորը բացատրում է, որ Աստուածաշնչից կարող էր բերել նաև ժողովողի և Երեմիայի օրինակները, սակայն նախընտրում է «մերոյն» Գրիգոր Լուսաւորչին հիշեցնել, և բոլոր այն մարդկանց ուղքեր նման վիճակում էին եղել: Ամփոփելով հետևյալն է ասում Գրիգորը՝

«Եւ արդ բաւական են այսոքիկ: 27. Թէեւ ի վախճան ժամանակի հասեալ հանդիպեցաք, ըստ մարգարէութեանն Դանիէլի, եւ կամ ըստ մերոյն տեսւեանն Իսահակայ սրբոյ եւ քահանայապետի, կամ ըստ սրբազանին Մովսէսի յիւրում սքանչելի տախտակի մարգարէական տառի, զողբս ի վերայ Հայաստանեայցս առնելով, սակայն ըստ իմում կարի ոչ անտեղի տեսի սուղ ինչ ցանկակարկատ լինել, քանզի զայսոսիկ որ խրամատենն, քանզի «ոք քակէ զցանկ հայրենի, աւճ հարցէ զնա» ըստ աստուածայնոյն մարգարէութեան տեսողի»:¹⁰

Բազրատունյաց թագաւորութեան ծայրահեղ վիճակը Գրիգորին հիշեցնում է աղետալի մարգարէությունները, դրանց մեջ նաև Սահակ Պարթևինը, որ գտնում ենք ներմուծված Դազար Փարպեցու Հայոց պատմության մեջ: Այն ավելի ուշ ժամանակի աշխատանք է, բայց պարզ է, որ հորինվել էր Գրիգորի օրերից առաջ: Մեջբերած հատվածը կարևոր է նաև նրանով, որ Գրիգորն իր ժամանակը «վախճան ժամանակ» է անվանում և համեմատում այն Մովսէս Խորենացու վերջին ողբի հետ, որպես պատշաճ մի համեմատություն:

Ողբագին եղանակով է գրված նաև քսանչորսերորդ նամակը, որը նույնպես ուղղված է Սարգիս վարդապետին¹¹: Այստեղ գտնում ենք Գրիգորի ողբն իր ժողովրդի կորսված մեծութեան մասին: Գրիգորը տալիս է Երվանդունի և Արշակունի թագաւորների անունները, հավանաբար Գագիկ թագաւորին նրանց հետ համեմատելու համար:

⁸ ՄՄ 21.43-46, էջ 271-272; Կ2, էջ 9:

⁹ ՄՄ 27, էջ 294-298; Կ18:

¹⁰ ՄՄ 27.26-27, էջ 296-297; Կ18, էջ 55:

¹¹ ՄՄ 24, էջ 278-284; Կ19, էջ 57-64:

Բերենք մի քանի օրինակներ ողբի ոճով Գրիգորի գրած այդ նամակի մի հատվածից՝

«Մ'ւր թորգոմեան թեակոխութիւն, ո՛ւր հայկեան հանգէս եւ հիացուցանելի գործառնութիւն, ո՛ւր Արամեան արմատ եւ մեծութիւն...»

ո՛ւր Արամ Արամեան նահապետն, ո՛ւր Արայն գեղեցիկ, Արարատեան կերտացօղ»¹²։

Գրիգոր Մագիստրոսը հաճախ պարսկական անուններ և ուրիշ տարրեր է մեջբերում՝ առանց բացասական դիտողությունների։ Այդ առումով նա տարբերվում է խորենացուց։ Նրա հետ Գրիգորը համամիտ է հունական ուսման և առասպելների հանդեպ ունեցած սիրո հարցում։

Նրա պատմության փրիխտոփայությունը մոտ է խորենացուն՝ Գրիգորի համար Քրիստոնեության ընդունումը ոչ այնքան որոշիչ պահ է եղել հայոց երկարատև պատմության մեջ, չնայած ինքը Հայոց եկեղեցու հավատարիմ մի զավակ է։ Նրա համար չափազանց կարևոր է մեծամեծ տոհմերի շարունակականությունը, և դրանց ներկայացուցիչների ցուցաբերած արիությունը։ Այդ մոտեցումը կիսում է նա նաև Թովմա Արծրունու հետ։ Դրա մի օրինակը հետևյալն է՝

«Թէպէտև զկնի կցորդաբար ի մեզ տողանի սեր և նահապետութիւն և թէպէտև ոմանց անարի և անգօր զոյ, սակայն տիրապետեալ տանս Թորգոմեան, պահելով զաթոռն»¹³։

Բաց թողնելով այն սերունդները, որոնք ծառայության մեջ են ապրել, ինքը հիշատակում է իր տոհմը, Պարթև Արշակունիների մասին ասում է՝

«Մ'ւր մերն Տրգատ, Խոսրով, Տիրան և Տիգրան, Արշակ, Վարազդատ, Արշակ և վերջին Վաղարշակ»¹⁴։

Խորենացու նման նա հիշատակում է նաև Վահագնի ծնունդի հեթանոսական երգը, մեջբերելով այն որպես հին օրերի առավելություններից մեկը, ասելով՝

«ուր Վահագն որ և Նրկնէր երկիր, և որ զկնի առասպելին առումն»¹⁵։

Հասնելով իր ժամանակին, նա չի թաքցնում իր դառնությունը՝

«Եւ մերոյս հաւ ի հիացման եկեալ հրացեալ խորհրդով հաւանիմ ինձ միայն հնարս զհարկաւորն հատուցանել զհարցն իմ սահման. զի թերևս զերծեալ ի ծորեալ և ի դառն կենցաղոյս, որ իբրու զանկենցաղս վարիմք։ 35. Քանզի զի՞նչ աւզուտ մեզ երկարութիւն ամաց, եւ մեծագոյն բարկութիւնս եւ զտառապանս կրել եւ տեսանել եւ ի վերայ յոքունց առնուլ ողբս եւ զնոցայն ցաւակցել։ 36. Վասն զի իմ է բոլորիցն բեկումն [...]»¹⁶

¹² Մ24.29, էջ 280; Կ19, էջ 59-60:

¹³ Մ24.32, էջ 282; Կ19, էջ 61:

¹⁴ Մ24.31, էջ 282; Կ19, էջ 61:

¹⁵ Մ24.28, էջ 280բ և ծան. 20; Կ19, էջ 61:

¹⁶ Մ24.34-36 էջ 282; Կ19, էջ 61:

Կոստանյանցն ուշադրություն է դարձրել Մազիստրոսի օգտագործած հավանաբար ժողովրդական աղբյուրների վրա: Գրիգոր Պահլավունին որոշ տեղեկություններ ունի հիշատակած անձանց մասին, ովքեր բացակայում են Խորենացու մոտ¹⁷: Շատ հավանաբար Մազիստրոսը գրանք վերցրել է իր ժամանակին դեռ պատմվող առասպելներից: Ուշադրության արժանի է այդ առասպելների արժեքի մասին Մազիստրոսի նամակներում արտահայտված կարծիքները: Մազիստրոսը առասպելական նյութը խառնում է Խորենացուց իր վերցրած տեղեկություններին: Այդ տեղեկությունները Խորենացին իր հերթին հաճախ հին վիպասանություններից և առասպելներից էր վերցրել: Մազիստրոսն այդ երկու տիպի աղբյուրները կարծես նույն լրջությամբ է բնորոշում՝ որպես անցյալի մասին արժանի և վստահելի տեղեկություններ: Եթե դա հիշենք, առանձին հետաքրքրություն է ստանում Մազիստրոսի մեջբերած Արտաշեսի վիպասանության հատվածը, «գոր և ի գոեհիկա աւանդեալ գտաք»¹⁸: Մազիստրոսի համար պատմությունը ոչ միայն գրավոր ձևով է ավանդվել, այլև՝ բերանացի, և ավանդվել է ոչ միայն կրթություն ստացած եկեղեցականների կողմից, այլ նաև ժողովրդի, ամենապարզ՝ «գոեհիկ» մարդկանց կողմից: Մա մի կարևոր հանգամանք է նաև հայ ժողովրդի պատմության մեր ընկալման համար:

Գրիգոր Մազիստրոսի գործերը իրենց ամբողջության մեջ ներկայացնում են ցարդ լիովին չճանաչված վկայություն տասնմեկերորդ դարի աշխարհիկ մի մարդու աշխարհայացքի, և այն դերի, որ նրանում խաղում են պատմագրությունը, առասպելներն, Աստուածաշունչը և դիցաբանությունը: Դրանք հազվագյուտ հնարավորություն են տալիս ուսումնասիրելու մի նախարարի բազմակողմանի մտքերն ու կարծիքները իր անձնական կյանքի, իր տոհմի, իր ազգի և այն դերի մասին, որ նրա համար ունեն բանավոր և գրավոր ավանդությունները:

Գրիգոր Մազիստրոսի գրվածքներում հայոց պատմության վաղ շրջանի արձագանքները նաև կարևոր լույս են սփռում հայ հնագույն պատմական հուշարձանների վրա:

Գրականություն

Langlois Victor, 1869 ‘Mémoire sur la vie et les écrits de Prince Grégoire Magistros, duc de Mésopotamie, auteur arménien du Xie siècle’, *Journal asiatique*, 5-64.

Leroy M., 1935 ‘Grigor Magistros et les traductions arméniennes d’auteurs grecs’, *Annuaire de l’Institut de Philologie et d’Histoire Orientales et Slaves* 3 (1935), 263-294.

¹⁷ Կոստանյանց 1910, 318-319:

¹⁸ Մ52.8, էջ 332; Կ33, էջ 86-87; Արտաշեսի խոսքեր, էջ 86:

Խաչերյան Լ. Գ., 1987 Գրիգոր Պահլավունի Մագիստրոս (985-1058). *Կյանքն ու գործունեությունը*, Los Angeles.

Կոստանեանց Կ., 1910 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Աղէֆսանդրապոլ
Մխիթարյան Սարգիս, 2001 Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան.

Մուրադեան Գոհար, 2012 ‘Գրիգոր Մագիստրոս’, Պետրոս Հովհաննիսյան (խմբ.), *Մատենագիրք Հայոց, ժջ հատոր, ժԱ դար*, Երևան.

Մուրադյան Գոհար, 2014 ‘Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը. կյանքը’, *Բանբեր Մատենադարանի* 20 (2014), 5-44.

Sanjian Avedis K., 1993 ‘Gregory Magistros. An Armenian Hellenist’, J.S. Allen և ուրիշներ (խմբ.), *To Hellenikon. Studies in honor of Speros Vryonis, Jr.* 2 vols. New Rochelle NY, ii, 131-158 .

Terian Abraham, 2012 *Magnalia Dei. Biblical History in Epic Verse by Grigor Magistros. Critical Text with Introduction, Translation, and Commentary*, Louvain.

van Lint, Theo Maarten, 2010 ‘Grigor Magistros’, ‘Letters to Amir Ibrahim’, ‘*Magnalia Dei*’, in David Thomas and Alex Mallet (eds), *Christian-Muslim Relations. A Bibliographical History. Volume 2 (900-1050)*, Leiden – Boston, 703-713.

2012 “Grigor Magistros Pahlawuni: Die armenische Kultur aus der Sicht eines gelehrten Laien des 11. Jahrhunderts”, *Ostkirchliche Studien* 61, 66-83.

2014 ‘La cultura armena nella visione del mondo di Grigor Magistros Pahlawuni’, in Rosa Bianca Finazzi ed altri (eds.), *Atti del Terzo Dies Academicus, 12-14 novembre 2012* (Accademia Ambrosiana. Classe di Studi sul Vicino Oriente), Milano, 3-22.

Theo van Lint

Early Historiography in the *Letters* of Grigor Magistros

Grigor Magistros Pahlawuni had a keen interest in the past of his people, which manifests itself among other things in his quotations from Movsēs Xorenac‘i’s *History of the Armenians* and from Agat‘angelos’ *History*, and no less through his interest in folk-lore, which represents a rich source for ancient, sometimes pre-Christian tradition.